որ իրենք տրամադիր են որոշ զիջումներ անել Լոռիի շրջանում, բայց Ախալքալաքի գաւառում՝ ո՛չ մի զիջում։ Նրանք առաջարկեցին հետևեալ սահմանագիծը Վրաստանի և Հայաստանի միջև.

Սկսելով Զաթընդաղ 7378 գագաթից Թիֆլիսի և Գանձակի նահանգների սահմանագծից՝ սահմանը պէտք է անցնէր Բոլոր-Կոնտ 6475 լերան կատարով, ապա, Ջրաբաշխի ուղղութեամբ, Ակոռի գիւղի հարաւային կէտին, ուր ձախ կողմից թափւում է մի գետակ Դերեթաշայի մէջ։ Այստեղից, ուղիղ գծով դէպի Ակուտկայա սարը և ապա Ջրաբաշխով մինչև 7252 նշանը, այստեղից լեռնաշղթայով Կրեստովայա լերան կատարը 6488։ Յետոյ, Ջրաբաշխով, Գայլի Դրունք լեռնանցքով —Օսինովայա լեռը — Լոկ լեռը — Լոկի լեռնանցքը — 5752 բարձունքը, Սաաթի գիւղը հարաւից առնելով՝ 6132 բարձունքը։ Այստեղից Ջրաբաշխով՝ Ինգանչայ գիծը, ապա Կարանլխ գետով Լէյլի դաշ բարձունքը։ Ապա՝ Թիֆլիսի նահանգի նախկին սահմանը, Օկիւզդաշ 8018 լերան վրայով՝ Օրտուլդաշ 8030 լեռը, 8127 նշանը մինչև Ուչ-Թափալար 9783 լեռը»։

Այսպիսով, ամբողջ Լոռիի դաշտը և երկաթուղին մինչև Սանահին պիտի անցնէին Հայաստանին։ Այս գիծը վրացիները համաձայնւում էին նկատել իբրև ժամանակաւոր սահման. եթէ Հայաստանի ակնկալութիւնները թիւրքիայից իրականանային, սահմանագիծը պէտք է վերաքննէր։

Հայերը համաձայնւում էին պայմանական կերպով զիջել Ախալքալաքի մեծ մասը՝ պահելով իրենց ձեռքին լճերի շրջանը։ Լուրջ զիջումներ էին անում և Լոռիի շրջանում։ Հայերն առաջարկում էին հետևեալ սահմանագիծը. Կողբ գիւղից 4 վերստ հիւսիս-արևմուտք գտնւող Շումալ (3465) լեռը. ապա՝ 1603 բարձունքով, 3938 (Գեղիկ-Բուռուն լեռը) բարձունքի վրա գտնւող ձմեռանոցով դէպի Քէչէլ Կոնդ (4865) լեռը, Բուղաքար լեռը. ապա՝ 7364 բարձունքի վրա գտնւող ձմեռանոցից դէպի Լալար սարը (8386), 7262 բարձունքը, որտեղից սահմանը շուռ է գալիս դէպի հիւսիս-արևմուտք, Կրեստովայա (6488) լեռը, 5810 բարձունքով (Գայլի Դրունք լեռնանցքը) Օսինովայա սարը, Լոկ սարը (7038), ապա՝ Լոկի լեռնանցքը (5999), «Սաաթի» մակագրութեան վրայով դէպի 5752, 5334 բարձունքը, որտեղից ուղիղ գծով Աղրիքար (9765) լեռը։ Եւ Ախալքալաքի գաւառով՝ Աղրիքար (9765) լեռը՝ դէպի Շիչ Թափա (8820) լեռը, 7637 (Սուրբ Յովհաննէս) բարձունքը, 7168 (Պոտ-Զանա-Թափա լեռը) բարձունքը, 6741 բարձունքը, Էշտիա գիւղի (որ պիտի մնայ Հայաստանին) վրայով Ուչ-Թափա (6254) լեռը, որտեղից ուղիղ գծով 4319 բարձունքը, որ Քուռից արևմուտք է գտնւում (Օկամ և Ազմանա գիւղերը թողնելով Վրաստանին). ապա՝ սահմանը անցնում է դէպի հարաւ-արևմուտք, Քուռ գետի հոսանքով, մինչև Արդահան։

Ինչպէս տեսնում ենք, հայ-վրացական սահմանագծի հիմնական տարբերութիւնը Լոռիում Ալլահվերդիի պղնձահանքերն էին. վրացիները պահանջում էին Ալլահվերդին իրենց, հայերը՝ իրենց։ Եւ երբ վրացիները